

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱԳԻՆ ԵՒ «ՔՈՐՈՆԱ»-Ի ԺԱՀՐԻ ՀԱՄԱՎԱՐԱԿԻՆ ՄԻՋԵՒ ԿՔԱԾ ԼԻՔԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ ՍԵՒՌԱԾ ԵՆ 6 ՅՈՒՆԻՍԻ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Այն միջոցին, երբ Լիբանան եւ անոր բնակիչները կքած են մէկ կողմէ տնտեսական տագնապին եւ միւս կողմէ «Քովիտ-19» համավարակին միջեւ, լիբանանցիներու եւ առհասարակ տեղական թէ արտաքին շրջանակներու ու հանրային կարծիքի հայեացքները սեւեռած են այսօր՝ շաբաթ, 6 յունիս 2020-ին Նախատեսուող ժողովրդային պահանջատիրական բողոքի ցոյցերուն վրայ:

Արդարեւ, 17 հոկտեմբեր 2019-ին բռնկած բողոքի ցոյցերը առաւել եւս սրեցին երկրին մէջ տիրող առանց այդ ալ տնտեսական տագնապը՝ զայրոյթի եւ յուսալքքումի ալիք ստեղծելով քաղաքացիներուն մօտ: Բազմաթիւ գործատեղիներ տեղի տալով տնտեսական տագնապին եւ «Քորոնա» ժահրի համավարակին պատճառած հետեւանքներուն՝ սկսան փակել իրենց դռները եւ գործէ արձակել հարկւրաւոր աշխատաւորներ: ՄԱգործութիւնը հասած է անելի քան աշխատուժի յիսուն առ հարիւր համեմատութեան:

17 հոկտեմբեր 2019-ին բռնկած ցոյցերուն երկրորդ ալիքը նկատուող այս օրուան բողոքի ելոյթները որոշ մտահոգութիւններ կ'առթեն երկրի վարիչներուն մօտ, շրջան ընդդ քուլիսային այն տեղեկութիւններու լոյսին տակ, թէ այդ ցոյցերը տնտեսական եւ ապրուստի պահանջներու պիտակին տակ կը սպառնան երկրին իշխանութիւններուն փոփոխութեան: Հայեացքները սեւեռած են այսօրուան ցոյցերուն որդեգրելիք կեցուածքներուն եւ անոնց ստանալիք ուղղութեան ու հետեւանքներուն վրայ:

Ցուցարարներուն պահանջները կը տարուբերին տնտեսական, քաղաքական, ապահովական եւ ընկերային մարգերուն մէջ արձանագրուող թերացումներուն կամ բացողումներուն միջեւ: Լիբանանեան գաւազան շրջաններէն ցուցարարներ կոչեր հրապարակեցին համախմբուելու այսօր՝ շաբաթ երեկոյեան, Պէյրութի կեդրոնական հրապարակին վրայ: Անոնք կը պահանջեն խորհրդարանական կանխահաւ ընտրութիւններ, փութածութեան դէմ ազդու եւ գործնական միջոցառումներու որդեգրում, ընկերային մարզին մէջ հասարակութեան սկզբունքի կիրարկում, եռապատկուած սղաճի դարմանում, լիբանանեան թղթոսկիի վերարժեւորում, աշխատավարձերու յաւելում եւ պատշաճեցում ամերիկեան տոլարի ելեւելող սակին համաձայն, դատական կառույցներու անկախ գործունեութիւն, հեռու՝ քաղաքական կողմերու թէ անձնաւորութիւններու միջամտութենէն եւ ազդեցութենէն: Պահանջները կ'ընդգրկեն Նաեւ խնդրաշարոյց հարցեր, ինչպէս՝ զինեալ երեւոյթներու վերացում եւ երկրի ապահովութեան պարտականութիւնը միայն լիբանանեան բանակին եւ յարակից ուժերուն վստահելու պահանջը: Փաստօրէն, ցուցարարներու կարգ մը խմբակներու ներկայացուցիչներ յայտարարեցին, թէ իրենց կը բողոքեն հիմնականին մէջ տնտեսական ու ապրուստի պայմաններու բարելաւման պահանջով եւ զինեալ տարրերու հարցին դասաւորումը կը նկատեն քաղաքական հարց: Այս ծիրին մէջ հանգստեան կոչուած Նախկին բանակայիններու յանձնախումբը երէկ յայտարարեց, թէ իրենք կը մերժեն մասնակցիլ այսօրուան ցոյցին, մինչ Նոյն մարզի տարբեր ներկայացուցիչ մը կոչ ուղղեց հանգստեան կոչուած Նախկին բանակայիններուն մասնակցելու այսօրուան բողոքի ելոյթներուն:

Նմանապէս, բողոքի ցոյցեր արդէն իսկ ընթացք առին երեկ՝ ուրբաթ երեկոյեան, Սայտայի եւ Թրիփոլիի մէջ: Սայտայի մէջ ցուցարարները մերժեցին մասնակցիլ այսօրուան բողոքի ելոյթներուն եւ իրենց զօրակցութիւնը յայտնեցին երկրի, յատկապէս՝ Հարաւը Խրայէեան թշնամիին դէմ պաշտպանող ուժերուն:

Իսկ Թրիփոլիի Ապտէլ Համիտ Զարամէ հրապարակին վրայ երկու հակադիր բողոքի ելոյթներ կազմակերպուեցան՝ լիբանանեան բանակէն տարբեր զինեալ խմբաւորումներուն գծով, յայտնօրէն ակնարկելով Յըզպալլայի ուժերուն: Ցուցարարներու մէկ խումբը իր գօրակցութիւնը յայտնեց 'Դիմադրութեան ուժերուն' նշելով, որ նման ցոյցեր արտաքին կողմերէ հրահրուած են, մինչ հակադիր խումբը պահանջեց ապագիկնել բոլոր զինեալ ուժերը բացի լիբանանեան բանակէն, ինչպէս նաեւ թիւ 1559 որոշումին գործադրութիւնը:

ԿԱՆԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՑՈՒՄՆԵՐ

Իր կարգին, երկրի քաղաքական թէ ապահովական պատկան ղեկավար մարմիններ որդեգրեցին կանխագգուշական քայլեր՝ հրապարակելով համապատասխան որոշումներ: Այս իմաստով, վարչապետ Հասան Տիապ կոչ ուղղեց պաշտպանուելու «Քորոնա» ժահրին դէմ՝ պաշտպանիչ դիմակներու պարտադիր գործածութեամբ, չփակելու երթելեկի ճամբաները եւ զգուշանալու խափանարարական արարքներէ:

ՄԱՅՔԸԼ ՈՒՎՅԹԻ ԱԶՍՏ ԱՐԶԱԿՍԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵԼՈՎ ԻՐԱՆԻՆ՝

«ԹԵՐՐԱՆԻ ԶԵՏ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՑՆԵԼԸ ԿԱՐԵԼԻ Է»

Կ'ԸՍԷ ԹՐԱՍԹ

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամի շնորհակալութիւն յայտնեց Իրանին՝ ամերիկեան ծովու-ծի Նախկին զինուոր Մայքըլ Ուայթը ազատ արձակելուն համար՝ նշելով, որ այդ քայլը ցոյց կու տայ, թէ Իրանի հետ համաձայնութիւն գոյացնելը կարելի է:

«Շնորհակալութիւն Իրան, ասիկա ցոյց կու տայ, թէ համաձայնութիւն ձեռք բերելը կարելի է», «Թուիթթըր»-ի վրայ գրեց Սպիտակ տան ղեկավարը:

Թրամի յայտնեց, որ հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Ուայթի հետ, որ ինկզաբքի օր Իսլամական հանրապետութեան մէջ երկու տարի բանտարկուած



մնալէ ետք օդանաւով հեռացած է Թեհրանէն:

Նշենք, որ Ամերիկան իր կարգին այս շաբաթ ազատ արձակեց իր մօտ արգելափակուած երկու իրանցիներ:

Շար.ը՝ էջ 3

«ՁԻՆԵԱԼ ՈՒԺԵՐՈՒՆ ՄԵՎ ՄԱՍԸ ՏԱԿԱԻՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ Է»

Կ'ԸՍԷ ՓԵՆԹԱԿՈՆԻ ԲԱՆԲԵՐԸ

Միացեալ Նահանգներու զինեալ ուժերուն մէկ մասը տակաւին Ուաշինկթընի շրջանին մէջ է եւ ռազմական այիտի վերադառնալ, երբ իրավիճակը ասիկա արտօնէ: «ՌԻԱ Նովուսթի» կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Փենթագոնի բանբերը:

«Նախարարութիւնը որոշում տուած է մայրաքաղաքի շրջանին դուրս բերել զինեալ ուժերու որոշ ստորաբաժանումներ եւ զանոնք վերադարձնել ռազմակայան: Չինուորական հրամանատարութիւնը մշտապէս կը հետեւի փոփոխական իրավիճակին: Միւս զինուորներուն վերադարձը տեղի պիտի ունենայ մեկնելով կացութենէն»,




յայտնած է Միացեալ Նահանգներու պաշտպանութեան Նախարարութեան բանբերը՝ մեկնաբանելով լրատուամիջոցներու այն հաղորդումները, թէ 82-րդ

Շար.ը՝ էջ 3

ԸՍՏ ԱԶՐԴԵՅՃԱՆԻ, ՃՆՇՈՒՄԾ ԵՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԶԵՏ ՍԱՐՍԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՂ «ՍԱԴՐԱՆՔՆԵՐ»-Ը

Ազրպէյճանական «Հաքքին» կայքը կը հաղորդէ, որ Ազրպէյճանի պետական սահմանապահ ծառայութեան մամլոյ բաժանմունքը յայտարարած է. «Շնորհիւ Ազրպէյճանի պետական սահմանապահ ծառայութեան ձեռնարկած կանխարգելիչ քայլերուն՝ Վրաստանի սահմանապահ ծառայութեան հետ համատեղ, Զեչիք-չիտաղ պետական պատմամշակութային արգելոցի (վրացական Դաւիթ Գարեջիի համալիր, «Ա.») տարածքին մէջ ոչ մէկ սադրիչ գործողութիւն արձանագրուած է»:



Յիշենք, որ ըստ ազրպէյճանական լրատուամիջոցներու, Վրաստանի խումբ

Շար.ը՝ էջ 3

«ՄԵՆԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆԸ ԹՈՒՐԵԻՈՅ ԶԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ՝ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՐ ԳԵՐԻՇԽԱՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ»

Կ'ԸՍԷ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Յունաստանի պաշտպանութեան Նախարար Նիքոս Փանայոթփուլոս յայտարարած է, որ իր երկիրը իր գերիշխանական իրաւունքները պաշտպանելու համար պատրաստ է ամեն բանի, ներառեալ՝ «սադրանքներու» պարագային Թուրքիոյ դէմ զինուորական գործողութիւնները: Այս մասին Նախարարը յայտարարած է թրքական «ՄԹԱՐ Թի.Վի.»-ին:

«Վերջին ժամանակներուն Թուրքիոյ պահանջը բաւական յարձակողական է: Ես կը հաւատամ, որ Յունաստանի կողմէ յաղթահարումը այդպիսի



վարուելակերպին, որ, ընդհանուր առմամբ, Նախարարականի հակում ունի

Շար.ը՝ էջ 3

ՄԵՆԵՆՏԵԶ ԶԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՐԱՆՁԷ ԱԶՐԴԵՅՃԱՆԻՆ ՏՐԱՍՊԱՐԻՈՒՂ ՄԵՇԱԳՈՒՄԱՐ ՈՎԱՍԿԱՆ ԱՅԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը կը տեղեկացնէ, թէ վերջին երեք տարիներուն, Միացեալ Նահանգներու կողմէ Ազրպէյճանին տրամադրուած առաւել քան 120 միլիոն տոլարի ռազմական նպաստներով մտահոգուած՝ ծերակուտական Պապ Մենենտեզ կառավարութեան հաշուետուութեան գրասենեակին դիմած է՝ անյապաղ հետաքննութիւն մը պահանջելով:

Այս հետաքննութեան զեկուցումը պիտի տրամադրուի Ծերակոյտի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբին:

Մենենտեզ կը շեշտէ, թէ ռազմական նման մեծածաւալ յատկացումներ կրնան խախտումներ ըլլալ Ազրպէյճանին ռազմական աջակցութեան տրամադրումը սահմանափակած եւ 1992-ին վաւերացուած թիւ 907 յանելուածին, որ պատժամիջոց մըն է՝ Հայաստանի եւ Արցախի դէմ Պաքուի բռնարարքներուն պատճառով:

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը, որ Ազրպէյճանին ռազմական աջակցութեան տրամադրումին դէմ համացանցային արշաւի մը սկսած է՝ anca.org/alert կայքին միջոցով, շնորհակալութիւն յայտնեց Մենենտեզին այս քայլին համար:

ԱՆՆԱ ՆԱԳ ԴԱԼԵՆԸ. «ԹՈՒՐԲԻՒՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՉԷ, ՈՐ ՎԱՐԷ ՄԱԿ-Ի 75-ԲԴ ՆՍԱՇՐՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ»



Հայաստանի արտաքին գործոց Նախարարի մամլոյ բանբեր Աննա Նաղդալեան «ՆիւզԱրմենիա» լրատուական գործակալութեան հետ զոյցին ընթացքին մեկնաբանեց ՄԱԿ-ի Շնդհանուր ժողովի 75-րդ նստաշրջանի Նախագահի ընտրութեան հարցը: Նախագահի Նախնականօրէն հաստատուած միակ թեկնածուն Թուրքիոյ ներկայացուցիչ Վոլքան Պոզըրըն է:

Լրագրողը դիտել տալով, որ Նախագահութեան համար քուէարկութիւն պահանջած են Հայաստանը, Յունաստանն ու Կիպրոսը՝ հարցուցած է, որ 193 երկրներէն միայն երեք երկրի պահանջով կ'իրականացուի՝ քուէարկութիւն:

Ան պատասխանեց, որ, համաձայն ՄԱԿ-ի աշխարհագրական կարգին վերաբերեալ սահմանուած սկզբունքին, ՄԱԿ-ի Շնդհանուր ժողովի 75-րդ նստաշրջանի Նախագահը պետք է ընտրուի Արեւմտաեւրոպական երկիրներու խումբէն, իսկ միակ թեկնածուն Թուրքիոյ ներկայացուցիչն է:

«Ինչպէս նշեցիք, Հայաստանը, Յունաստանը եւ Կիպրոսը, խախտելով լռութեան ընթացակարգը, նամակներով դիմած են ՄԱԿ-ի Շնդհանուր ժողովի 74-րդ նստաշրջանի Նախագահ Թիմանի Սոհամետ-Պանտին՝ պահանջելով քուէարկութիւն: Կ'ուզեմ ընդգծել, որ Նոյնիսկ մէկ երկրի պահանջով քուէարկութիւնը պարտաւոր է իրականանալ»:

Լրագրողը հարցուցած է, որ ընտրուելու պարագային արդեօք ասիկա առաջին դէպքը պիտի ըլլայ, որ այս Նախագահի պաշտօնը վարէ Թուրքիոյ ներկայացուցիչը, եւ որ արդեօք Հայաստանի կողմէ որրեւ քայլ առնուած է՝ ներկայացնելու հայկական կողմի մտահոգութիւնները:

«Պետք է նշեմ, որ մտահոգութիւն յայտնած է ո'չ միայն հայկական կողմը, այլեւ մեր շաքը մը միջազգային գործընկերներ: Լռութեան ընթացակարգի խախտման վերաբերեալ նամակով հանդէս եկած են Հայաստանը, Կիպրոսը եւ Յունաստանը, անելին՝ Հայաստանի եւ Կիպրոսի կողմէ ներկայացուած է միացեալ նամակ: Վերջինին մէջ,

Շար.ը՝ էջ 3

ԱՐՑԱԽԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ՀՅՐ ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԵՏ



5 յունիսին Արցախի Հանրապետութեան Նախագահին կողմէ Արցախի գլխաւոր դատախազի պաշտօնին առաջադրուած Միհր Աղաջանեան հանդիպում ունեցաւ Արցախի Ազգային ժողովի «Հայ յեղափոխական դաշնակցութիւն» խմբակցութեան հետ:

Խմբակցութեան անդամներուն հարցադրումներուն ի պատասխան՝ Միհր Աղաջանեան ներկայացուց դատախազութեան մէջ հետաքայլ բարեփոխումներու իրականացման, երկրին մէջ օրինականութեան ամրապնդման, փութածութեան դէմ պայքարի շարունակականութեան եւ այլ հարցերու վերաբերեալ իր տեսլականը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ 100 ՈՍՏԻՎԱՆ՝ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՅՐՈՎ ԿԱՐԱԿՈՒՄԾ

Հայաստանի մէջ 5 յունիսին «Քորոնա» ժահրային հիւանդութեան ընդհանուր դէպքերուն թիւը հասաւ 11.817-ի, որոնց 3513-ը՝ ապաքինած: Շնդհանուր առմամբ, «Քորոնա»-ի պատճառով մահացած են 183 անձեր:

Հայաստանի ոստիկանութեան պետ Արման Սարգսեան յայտնեց, որ Հայաստանի մէջ «Քորոնա» ժահրով վարակուած շուրջ 100 ոստիկան կայ, կան Նաեւ մեկուսացուածներ, որոնց վիճակը ցարդ բնական է:

ՆԱԽԱՐԱՐ ՕՀԱՆԵԱՆ-ԳԷՈՐԳԵԱՆ
«ԲԶԻԶԱՅԻՆ ՀԵՌԱԶԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏՆՕՐԷՆ
ԽՈՐՀՈՒԴՆԵՐՈՒՆ ՄԷՋ
ՀԱՅ ԱՆԳԱՄ ՄԸ ՉԲԼԼԱԼՈՒ ԴԷՄ
ԲՈՂՈՔՍ ԿԸ ԲԻՓՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԵԱՆ
ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ
ՈՒ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՇՊԱՆԵԼՈՒ
ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ»



Երիտասարդության հարցերու եւ մարմանկրթության
Նախարար Վարդին Ծահանան-Գեորգեանի տեղեկատ-
ւական գրասենեակը երէկ երկնայեան հրապարակեց հե-
տեւեալ հաղորդագրութիւնը.

«Իբրեւ պատասխան կարգ մը լրատուամիջոցներուն կողմէ կատարուած այն լրատուութեան, թէ Նախարար Ծահանան-Գեորգեան բողոքած է բջիջային հեռաձայնի ընկերութիւններու տնօրէն խորհուրդներուն մէջ հայ ան-դամ մը ջնջլալու երեւոյթին դէմ, կը յստակացնեմ այս կէ-տերը.

Ա.- Դայերը լիբանանցիներ են եւ Լիբանանը բաղկացը-տող կարելու շերտ մը, որ երկրին ազգային կեանքին մէջ իր դերակատարութիւնը ունեցած է եւ կ'ունենայ:

Բ.- Նախարար Ծահանան-Գեորգեանի բողոքը եւ վերա-պահութիւնը արձանագրուեցաւ, երբ կը ընկարկուէր հա-մայնեային բազմազանութիւնը եւ ի յայտ կու գար այն իրականութիւնը, որ հեռաձայնի ընկերութիւններու տնօ-րէն խորհուրդներուն մաս կազմած են վեց համայնքներու ներկայացուցիչները՝ բացի հայ համայնքէն: Դետեաբար այդ կեցուածքը ընտրուած շրջագիծին մէջ էր եւ ոչ թէ հունէն դուրս ճշդուած կեցուածք մը:

Գ. Բջիջային հեռաձայնի ընկերութիւններու տնօրէն խորհուրդներուն մէջ հայ անդամ մը ջնջլալու դէմ բողոքը կը բխի ներկայացուցչութեան ամբողջականութիւնն ու բազմազանութիւնը պահպանելու Նախարարին յանձնա-ռութենէն»:

«ԱԼՖԱ» ԵՒ «ԹԱԶ» ԿԸ ԴԱՌՆԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑ ԵՒ Կ'ՈՒՆԵՆԱՆ
ՆՈՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԵՐ

Հաղորդակցութեան միջոցներու Նախարար Թալալ Հաուաթ երէկ մամլոյ ասուլիս մը տալով յայտարարեց, թէ հեռաձայնային «Ալֆա» եւ «Թազ» ընկերութեանց անդամ-ներէն կազմած է Ժամանակաւոր Նոր անձնակազմեր, որոնք պիտի վարեն Նշեալ ընկերութեանց տնօրէն խոր-հուրդները:

«Ալֆա» ընկերութեան կազմին մաս կը կազմեն՝ Ժաւ Նաւիֆ՝ տնօրէն խորհուրդի Նախագահ եւ գործադիր տնօրէն, անդամներ՝ Ռաֆիք Հատտատ, Ալին Զարամ, Մո-համետ Նասեր եւ Իմատ Համետ:

Իսկ «Թազ» ընկերութեան տնօրէն խորհուրդի անդամ-ներն են՝ Հայաթ Եուսէֆ՝ տնօրէն խորհուրդի Նախագահ եւ գործադիր տնօրէն, անդամներ՝ Շարաֆ Զորտահի, Ալի Եասին, Մաժետ Ապտէլ ժաուատ եւ Ժաուատ Նաբատ:

Այսուհետեւ երկու ընկերութիւններուն ելամուտը պե-տական գանձին պիտի փոխանցուին յառաջիկայ երեք ամիսներու ընթացքին ամբողջանալիք քայլերուն հիման վրայ եւ անոնք պիտի դառնան պետական հաստատու-թիւններ:

Իսկ իր դէմ արձակուած մեղադրանքներուն մասին հարցումի մը պատասխանելով Նախարար Հաուաթ յայտ-նեց, թէ պետք չէ ունեցած պատասխանելու, որովհետեւ այդ հարցը դատական համապատասխան իշխանութիւն-ներուն փոխանցած է:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ

- ԹԱՐԻԲ Ժոտիտի մէջ բանավեճ մը սաստ-կանալով վերածուեցաւ փոխադարձ զինարձա-կումի եւ դանակոծումի՝ պատճառելով վիրա-ւորներ: Ապահովական պատկան ուժեր միջամը-տեցին եւ քննութիւն բացին դէպքին շուրջ: Ըստ կարգ մը աղբիւրներու, դէպքը վերանորոգուած է Նախապէս Նշուած շրջանին մէջ վաճառատու-ներէն ապօրինի տուրքի պահանջով ծագած վե-ճի մը պատճառով: Իսկ այլ աղբիւրներու համա-ձայն, դէպքը հետեւանք է Նախկին վարչապետ Սաատ Հարիրիի եւ անոր եղբոր՝ Պահայի միջեւ տիրող մրցակցութեան հակադրութեան:
- ԲԺՇԿԱԿԱՆ մարզի անդամներուն դէմ յա-ճախակիօրէն կրկնուող յարձակումներուն դէմ իբրեւ բողոք, երէկ բժիշկներու սենտիքան որո-շեց միօրեայ բողոքի գործադուլ կատարել չո-րեքշաբթի, 10 յունիս 2020-ին: Այս քայլէն գերծ պիտի մնան անմիջական հրատապ կարիքնե-րու ընդառաջող բժշկական անձնակազմերը:
- ՃԱՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ Նախարար Իմատ Հուպայալա երէկ շրջեցաւ Պեշաայի, Պալալե-

ՀԱՐԱՏԱՐՍՈՒԹԻՒՆ ԴԻՍԿՐՈՒԹԵԱՆ ՊԼՈՔ.
«ՍԻԶԸՐ» ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՕՐԵՆԵԸ
ԲՈՆԱՏԻՐԱԿԱՆ Ե ԵՒ ԿԸ ԴՐՍԵՒՈՐԷ ԱՄԵՐԻԿԵԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹԵԱՆ ԿԵՐԾԻԸ»

Հաստատումութիւնն դի-մադրութեան երեսփոխաւա-կան պլոքը երէկ գումարեց իր Նիստը՝ Նախագահու-թեամբ երեսփոխան Սոհա-մետ Ռաատի:

Նիստին ընթացքին պլոքը շեշտեց, որ կառավարու-թեան աշխատանքը խանգա-րող պայմանները, ինչպէս նաեւ ելեմտական եւ ապ-րուստի տազանակները վնաս կը հասցնեն բոլորին, ինչպէս նաեւ երկիրը կը դնեն ընկերային սուր ցնցումներու վտանգին դիմաց:

Նիստէն ետք հրապարակուած հաղոր-դագրութեան մէջ Նշուեցաւ, որ այս կացու-թիւնը կրնայ աւելի եւս բարդանալ եւ երկ-րին մէջ որդեգրուած սխալ քաղաքակա-նութիւններուն իբրեւ հետեւանք՝ գրեթէ հիւժած ընկերային եւ տնտեսական ողնա-շարին մնացորդացը եւս փուլ բերել:

«Եթէ ոմանք այս կամ այն պատճառով հրաժարած են կառավարութեան հետ գործակցելէ, պէտք է իմանան, որ այդ աշ-խատանքը արգելակող խոչընդոտները շինծու են եւ կը միտին այդ աշխատանքին արդիւնատուութիւնը կասեցնել»՝ ամերիկե-ան քաղաքական ճնշումներուն ենթարկ-ուելով», Նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Հաստատումութիւնն դիմադրութեան պլո-քը շեշտեց, որ լիբանանցիներուն մէջ ապ-րուստին եւ երկրին կայունութեան սպառ-նալը վատագոյն արարքն է, որուն հակա-մետ ըլլալուն մէջ ոչ մէկ գրաւչութիւն կա: «Անելին. նման պահանջներու ընդառաջել կը Նշանակէ կամովին սայթաքիլ դէպի լարուած այն թակարդները, որոնք Լիբա-նանի եւ լիբանանցի ժողովուրդին հա-շուոյն» կ'իրագործեն թշնամի Իսրայէլին

ԿԱՊԻ ԻՍԱ. «ՍԻԶԸՐ» ԱՄԵՐԻԿԵԱՆ
ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՕՐԵՆԸ ՈՐՈՂԱԿԻՕՐԵՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ԶԻ ՎԵՐԱԲԵՐԻՐ

Միացեալ Նահանգներու մէջ Լիբանանի դեսպան Կա-պի Իսա յայտնեց, որ «Սի-զըր» ամերիկեան պատժա-միջոցներու օրէնքը ուղ-ղակիօրէն Լիբանանին չի վերաբերի»՝ զարմանք յայտնելով, թէ ինչո՞ւ. Լիբա-նանի մէջ այդ օրէնքը իր չա-փէն աւելի մեծ տարողու-թեամբ կը դիտուի:

«Սիզըր» ամերիկեան պատժամիջոցներու օրէնքը կրնայ լիբանանեան պետու-թեան վրայ իր հետեւանքները ունենալ, սակայն կը փորձենք լուծել հաւանական այդ հետեւանքները եւ մնայուն կապի մէջ ենք Լիբանանի հանրապետութեան Նա-խագահին, խորհրդարանի Նախագա-հին, վարչապետին եւ պատասխանա-տուներուն հետ: Ամէն ջանք ի գործ կը դրուի, որ Լիբանան «Սիզըր» ամերիկե-ան պատժամիջոցներու օրէնքէն չազդը-լի», ըսաւ Իսա՝ անելնելով, որ այդ օրէ-նքը կրնայ իր ուղղակի հետեւանքը ունե-նալ կարգ մը հաստատութիւններու եւ անհատներու վրայ, որոնք ուղղակիօրէն սուրիական վարչակարգին հետ կը գոր-ծակցին:

Իսա յայտնեց, որ «Սիզըր» ամերիկե-ան պատժամիջոցներու օրէնքը կը ճշդ գիտութեամբ հարցեր, սուրիացի տեղա-հանուածներուն վերաբերող խնդիրներ, ինչպէս նաեւ Սուրիոյ վերակառուցման



շահերը», Նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Միջազգային առումով Հաստատում-թիւնն դիմադրութեան պլոքը հաստատեց, որ ափրիկեան արմատներով քաղաքացի-ներուն դէմ ցեղապաշտութիւնը կը բացա-յայտէ Միացեալ Նահանգներու քաղաքա-կիրթ ըլլալուն կեղծիքը, ինչպէս նաեւ կը փաստէ անոնց կողմէ ընկերային արժեք-ներու օրէնքներու գործադրութեան յանձ-նառութեան խախտու իրականութիւնը:

Անդրադառնալով «Սիզըր» ամերիկեան պատժամիջոցներու օրէնքին՝ Հաստա-ր-մութիւնն դիմադրութեան պլոքը հաստա-տեց, որ անկէա բռնատիրական է եւ կը դրսեւորէ ամերիկեան ժողովրդավարու-թեան կեղծիքը:

«Այդ օրէնքը Սուրիան ու սուրիացի ժո-ղովուրդը չի կրնար ծուկի բերել եւ ամե-րիկեան ըմբառնոյթին ենթակա դարձը-նել», Նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Հաստատումութիւնը դիմադրութեան պլոքը խոսքի դատապարտեց Միացեալ Նահանգներու կողմէ օգտագործուած այս ոճը եւ անոր հիման վրայ որդեգրուած բո-լոր քայլերը, «որոնք իրենց նպատակնե-րուն պիտի չկարենան ծառայել, որովհե-տեւ մենք մեր գոյատեւման հօգը կամքով պիտի դիմադրենք անոնց», եզրափակուե-ցաւ հաղորդագրութիւնը:



թղթածրարը: «Ես մնայուն կապի մէջ եմ ամերիկեան վարչակազմին հետ, սա-կայն եթէ պարզուի, որ Լիբանան կը խախտէ այդ պատժամիջոցներուն գոր-ծադրութիւնը, ապա ամերիկեան կողմը կրնայ հաղորդակցիլ մեզի հետ եւ այս մասին յայտնել, հետեաբար մենք կ'աշ-խատինք լուծումներ գտնել», ըսաւ:

Հըզպալլայի քաղաքական դաշնա-կիցներուն դէմ ամերիկեան պատժամի-ջոցներ պարտադրելու հաւանականու-թեան մասին հարցումի մը պատասխա-նելով՝ Կապի Իսա յայտնեց, որ նման ար-տայայտութիւններ կ'օգտագործուին ներքին լիբանանեան առումով քաղաքա-կան նպատակներ իրականացնելու հա-մար: «Ես ոչ ոք կը պաշտպանեմ, սակայն իրականութեան մէջ պատժամիջոցնե-րուն մասին խօսքերը անճիշդ են», յայտ-նեց ան:

Իսա հաստատեց, որ Միացեալ Նա-հանգներուն համար Լիբանանը կարելու է, սակայն առաջնահերթ չէ: «Լիբանանի կառավարութեան մասին ամերիկեան վարչակազմին կարծիքը կը մնայ խոյնը, այսինքն»՝ սպասողական: Ամերիկեան վարչակազմը Լիբանանի կառավարու-թիւնը Հըզպալլայի կառավարութիւն չի նկատեր, այլ՝ կը հաւատայ, որ Հըզպալ-լա անոր վրայ որոշ ազդեցութիւն մը ու-նի: Ամերիկեան վարչակազմին համար կարեւորագոյնը կը մնան կառավարու-թեան իրագործումներն ու բարեկար-գումներու գործադրութիւնը: Հըզպալլա-յի մասին ամերիկեան վարչակազմին կեցուածքը կը մնայ անփոփոխ», շեշտեց ան:

Լիբանան վերադարձող արտերկրի լի-բանանցիներուն մասին հարցումի մը պատասխանելով՝ Իսա յայտնեց, որ կա-ռավարութեան կազմակերպած տուն-դարձի թռիչքներուն Բ. եւ Գ. փուլերուն մէջ Միացեալ Նահանգները ներառուած էին՝ աւելցնելով, որ 11-15 յունիս տեղի ու-նեալիք Դ. փուլին ծիրին մէջ Միացեալ Նահանգներու մէջ բնակող կարգ մը ար-տերկրի լիբանանցիներ պիտի վերադառ-նան Պելլուք:

ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՅԱՆՁՆԱՌՈՒՄԲԸ ԸՆԳԳԾԵՑ ԹԻՒ 1701
ԲԱՆԱՁԵԻ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ՖԻՆԻԻԼ-Ի ՈՒԺԵՐՈՒՆ
ՊԱՇՏՈՐԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐԱԶԳԱՄԱՆ
ԻՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ



Արտաքին եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու խորհրդարանական յանձնախումբը գումարեց իր Նիստը՝ Նախագահութեամբ երեսփոխան Եասին Ժապերի եւ ներ-կայութեամբ Լիբանանի մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղա-րի անձնական ներկայացուցիչ Իան Զիպիչի:

Նիստէն ետք Ժապեր յայտնեց, որ քննարկուած են Ապա-հովութեան խորհուրդի թիւ 1701 բանաձեռի գործադրու-թեան կարեւորութիւնը, ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղա-պահ ուժերուն գոյութիւնն ու դերակատարութիւնը, ինչպէս նաեւ Լիբանանի տնտեսական-եւելմտական տազանալի լուծման կարելիութիւնները:

Ժապեր հաստատեց, որ Արտաքին եւ արտերկրի լիբա-նանցիներու հարցերու խորհրդարանական յանձնախումբը շեշտած է, որ Լիբանան յանձնառու կը մնայ թիւ 1701 բա-նաձեռին գործադրութեան, ինչպէս նաեւ կը փափաքի, որ հարաւային Լիբանանի մէջ տեղակայուած ՖԻՆԻԼ-ի մի-ջազգային խաղաղապահ ուժերուն պաշտօնավարութիւնը երկարաձգուի՝ Նկատի ունենալով անոնց ունեցած կարեւոր դերակատարութիւնը:

Ժապեր յայտնեց, որ Արտաքին եւ արտերկրի լիբանա-ցիներու հարցերու խորհրդարանական յանձնախումբը իր կարգին այցելած է Նաբոուա եւ հաստատած այդ դերակա-տարութեան կարեւորութիւնը: «Իբրեւ ՄԱԿ-ի հիմնադիր եր-կիրներէն մէկը, Լիբանանի եւ ՄԱԿ-ի միջեւ գործակցութիւնը պատմական է, իսկ ՖԻՆԻԼ-ի ուժերը 14 տարուան սահմա-նային կայունութեան կրցած են իրագործել, եւ մեզի համար սահմանային կայունութեան պահպանումը կարելու է», ըսաւ Ժապեր:

Ան յայտնեց, որ հարաւային Լիբանանի մէջ ՖԻՆԻԼ-ի ու-ժերուն նկատմամբ պաշտօնական եւ ժողովրդային հիւրըն-կալում կայ՝ շնորհակալութիւն յայտնելով նաեւ ՖԻՆԻԼ-ի կողմէ ցուցաբերուած բարգաւաճման դերակատարութեան համար անոր իսկ գտնուած վայրերուն մէջ:

Ժապեր ընդգծեց, որ Արտաքին եւ արտերկրի լիբանա-ցիներու հարցերու խորհրդարանական յանձնախումբը կը վերահաստատէ հանրապետութեան Նախագահին, խորհըր-դարանի Նախագահին, վարչապետին եւ խորհրդարանին ցուցաբերած կեցուածքը, որուն հիման վրայ ՖԻՆԻԼ-ի ու-ժերուն պաշտօնավարութիւնը պէտք է մէկ տարիով երկա-րաձգուի՝ առանց անոնց թիւին, պարտականութիւններուն կամ յատկացուած պիտուէին մէջ փոփոխութիւններ արձա-նագրելու:

Անդրադառնալով երկրին դիմագրաւած տնտեսական եւ ելեմտական տազանալի՝ Ժապեր յայտնեց, որ խորհրդա-րանը օրէնսդրական իր աշխատանքին ընդմէջէն կը մշակէ սոր բանաձեւեր, որոնք անհրաժեշտ են՝ յաջողցնելու հա-մար կառավարութեան մշակած տնտեսական բարեկար-գումի ծրագիրը:

Իր կարգին, Զիպիչ բարձր գնահատեց կառավարու-թեան տարած աշխատանքը, որուն շնորհիւ Լիբանան յաջո-ղեցաւ «Զորուստ» ժաիրի համաճարակը հակակշիռի տակ պահել եւ անոր դէմ պայքարի:

Զիպիչ դուռուտեց լիբանանցի քաղաքացիներուն առող-ջութեան ի խնդիր լիբանանեան պետութեան որդեգրած քայլերը:

Ան շեշտեց, որ Լիբանան պէտք է յաջողութիւն արձա-նագրէ Միջազգային դրամական ֆոնտին հետ իր վարած բանակցութիւններուն մէջ, որովհետեւ այդ յաջողութեամբ ո'չ միայն երկրին նիւթական օժանդակութիւն եւ դրամական վարկեր պիտի ապահովուին, այլ նաեւ՝ Լիբանանի մշակած տնտեսական ծրագիրին նկատմամբ վստահութիւն յայտնը-ւած պիտի ըլլայ, եւ ինքնաբերաբար Լիբանան յաւելեալ զօ-րակցութեան պիտի արժանանայ տնտեսական այդ ծրագի-րին գործադրութեան համար:

«ՍԻԶԸՐ» ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ
ՕՐԵՆԵԻ ՅԱՆՁՆԱՌՈՒՄԻ
ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ՝ ԵՐԿՈՒՆԱԲԹԻ

Սուրիոյ եւ լիբանանեան կարգ մը կառոյցներու եւ անձ-նաւորութիւններու դէմ պատժական տնօրինումներ կիրառ-կելու կոչուած «Սիզըր» ամերիկեան օրէնք յատուկ Նա-խարարական յանձնախումբը արդէն իսկ կազմուած է եւ անկէա իր անդամիկ Նիստը պիտի գումարէ երկուշաբթի, վարչապետարանի մէջ: Խորհրդակցութեանց առանցքը պիտի կազմեն «Սիզըր» ամերիկեան պատժամիջոցներու օրէնքին մանրամասնութիւններն ու յատկապէս՝ անոր հե-տեւանքները Լիբանանի վրայ՝ քննարկելով այն միջոցա-ռումներն ու քայլերը, որոնցմով կարելի է կանխարգիւէ Լի-բանանի վնաս կրելու հաւանականութիւնը Նշեալ օրէնքին պատճառով: :

Նշեալ յանձնախումբին մաս կը կազմեն՝ վարչապետ Հասսան Տիապ, փոխվարչապետ եւ պաշտպանութեան Նախարար Չէյսա Ազըր-Ատրա, արտաքին գործոց Նախա-րար Նասիֆ Հըթթի, ելեմտաքի Նախարար Ղազի Ռազնի, տնտեսութեան եւ առեւտրի Նախարար Ռաուլ Նաամէ, ներքին գործոց Նախարար Սոհամետ Ֆահմի եւ անհակցից մարզերու պատասխանատուներ:

ՆԱԽԱՐԱՐ ՆԱՍԻՖ ՀԸԹԹԻ
ԴԱՏԱՊԱՐՏԵՑ

Արտաքին գործոց Նախարար Նասիֆ Հըթթի երէկ բուն ներպով դատապարտեց խաբայեւեան ոստիգութիւնները Լիբանանի ուղղութեամբ՝ գտնուք նկատելով Լիբանանի ապահովութիւնն ու անդորրութիւնը խախտող քայլեր, որոնք կը հակասեն այս գծով որդեգրուած միջազգային օրէնքներուն եւ որոշումներուն:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՐԸ ԼԻՊԻՈՅ ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ ՀԱՖՅԱՐԻ ՈՒԺԵՐՈՒ ՎԵՐՋԻՆ ԿԵՂՐՈՆԻՆ ԳՐԱՒՈՒՄԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆ



Լիպիոյ ազգային համաձայնության կառավարության ուժերը յայտարարեցին, որ գրաւած են մայրաքաղաք Թրիփոլիէն 90 քիլոմէթր հարաւ-արեւելք գտնուող Թարիոնա քաղաքը՝ երկրին արեւմուտքին մէջ գործադիր Հաֆթարի ղեկավարած Լիպիոյ Ազգային բանակի վերջին կեդրոնը:

Ազգային համաձայնության կառավարության ուժերու բանքեր գնդապետ Սոհամետ Քսուլու Նշեց. «Մեր հերոս ուժերը Թարիոնա քաղաքը ամբողջութեամբ առին վերահսկողութեան տակ եւ ջախջախեցին Հաֆթարի ահաբեկչական միջոցները»:

Ազգային համաձայնության կառավարության վարչապետ Ֆայեզ Սարաժ իր կարգին յայտարարեց. «Մեր ճակատամարտը տակաւին կը շարունակուի, եւ մենք մտադիր ենք պետութեան վերահսկողութիւնը տարածել լիպիական ամբողջ հողին վրայ»:

ԹՈՒՐԵՒՈՅ ՄԵՋ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԵՐԵՔ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐ ԶՐԿՈՒՄԸ ԵՆ ԱՆՁԵՐՆԱԽԵԼՈՒԹԵՆ ԵՒ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ



Թուրքիոյ գերագոյն դատարանին որոշումով՝ երկրի խորհրդարանի ընդդիմադիր երեք երեսփոխաններ զրկուած են անձեռնմխելիութենէ եւ ձերբակալուած: Այս մասին կը հաղորդէ «Կազեթէ Զարընճա» օրաթերթը:

Ձերբակալուած երեսփոխաններն են՝ Էնիս Պերպերօղլուն՝ Թուրքիոյ գլխաւոր ընդդիմադիր Հանրապետական ժողովուրդի կուսակցութենէն, Լեյլա Կիւլենն ու Մուսա Ֆարիսօղլուն՝ քրտամէտ Ժողովուրդներու Ժողովրդավարական կուսակցութենէն:

Ֆարիսօղլու իր թուիթթրէան էջին վրայ կը տեղեկացունէ, որ զինք ձերբակալած են Տիգրանակերտ-Ուրֆա ինքնաշարժի ճամբուն վրայ:

«Երբ ես Տիգրապէրիէն կը մեկնէի Անգարա՝ նպատակ ունենալով երթալ մեր շտապ բնակարան, զիս ուղղակի ձերբակալեցին», ըսած է Ֆարիսօղլու:

Աւելի ուշ կալանաւորուած է նաեւ Լեյլա Կիւլենը, որուն Տիգրանակերտ գտնուող տունը շրջափակուած էր ոստիկանութեան կողմէ:

Բժշկական քննութենէն ետք Կիւլենը տեղափոխած են Տիգրանակերտի կլինիքու փակ բանտ, իսկ Ֆարիսօղլուն՝ Տիգրանակերտի «Տի» կարգի փակ բանտ:

Քրտամէտ կուսակցութեան երեսփոխաններէն ետք ձերբակալուած է Հանրապետական ժողովուրդի կուսակցութենէն երեսփոխան Էնիս Պերպերօղլուն: Քանի մը ընթացակարգերէ ետք զինք տեղափոխած են Պոլսոյ Մաթեփէի շրջանի «Լ» տիպի բանտ:

Աղբիւրը քրտամէտ կուսակցութեան երեսփոխաններու ձերբակալութիւնը կը կապէ քաղաքական հետապնդումներու հետ, անոնց մեղադրանք առաջադրուած է Թուրքիոյ մէջ ահաբեկչական նկատուող կազմակերպութիւններու առնչուած ըլլալու համար:

Պերպերօղլուն ձերբակալած են «Ճումհուրիէթ» օրաթերթին մէջ իր հրապարակած յօդուածներէն մեկուն համար:

ԷՐՏՈՂԱՆ ՄՏԱԴԻՐ Ե Ս. ՍՈՖԻԱՅԻ ՏԱՃԱՐԸ ՄԶԿԻԹԻ ՎԵՐԱԾԵԼ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան իր օգնականներուն յանձնարարած է Ս. Սոֆիա տաճարը թանգարանէն մզկիթի կարգաւիճակի վերափոխելու մասին բազմակողմանի ուսումնասիրութիւն կատարել: Այս մասին կը հաղորդէ թրքական «Հիւրիիէթ» օրաթերթը:

«Ուսումնասիրութիւն կատարեցէ՛ք, յետոյ ամեն բան կը գնահատենք եւ կը խօսինք: Զբօսաշրջիկները կրնան Այա Սոֆիա այցելել, եթէ անիկա մզկիթ դառնայ: Ատիկա մեր ազգը պէտք է որոշէ», յայտարարած է Էրտողան՝ Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան նիստի ընթացքին:

Ս. Սոֆիա տաճարը բիւզանդական ճարտարապետութեան յուշակոթող է: Տաճարը կառուցուած է 532-537 թուականներուն՝ Յուստինիանոս կայսեր կողմէ, որ որոշած էր այս տաճարով յանդիմանել Կոստանդնուպոլսոյ փառքը:



1453 թուականին Բիւզանդական կայսրութեան անկումէն ետք, թուրքերը տաճարը վերածած են մզկիթի: 1935-ին, Թուրքիոյ կառավարութեան որոշումով, որ ստորագրուած է արդի թրքական պետութեան հիմնադիր Զեմալ Աթաթուրքի կողմէ, տաճարը դարձած է թանգարան, կառոյցին պատերը մաքրուած են որմնանկարներէ եւ խճանկարներէ: 1985-ին տաճարը ընդգրկուած է ԵՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգութեան ցանկին վրայ:

ՔԱՆԱՏԱՆ ԴԱՂԵՑՈՒՑԱԾ Ե ԴԵՊԻ ԱԶՐՊԵՅՃԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐՏԱԾՈՒՄԸ ԵՒ ԱՐԳԻԱԾ ԹՈՒՐԵՒՈՅ ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՔԸ

Քանատան դադրեցուցած է դեպի Ազրպէյճան ռազմական արտածումը եւ արգիլած Թուրքիոյ զենքի վաճառքը: Քանատայի Հայ դատի յանձնախումբը կը հաղորդէ, որ այս մասին նշուած է 29 մայիսին «Կլոպը Ըֆերզ Քանատա»-ի հրապարակած՝ Քանատայի զինուորական արտածման մասին տարեկան զեկուցումին մէջ:

Կը նշուի, թէ 2017-ին քանատական սեփական ընկերութիւններու կողմէ Ազրպէյճանին զրահապատ մեքենաներու վաճառքը սկսելէն ի վեր ասիկա արդէն երկրորդ տարին է, որ Քանատան Ազրպէյճանը չի ներածեր զինուորական ապրանքներու առեւտուրով զբաղող երկիրներու շարքին: Մասնաւորաբար, հոկտեմբեր 2019-ին, Սուրիոյ մէջ Թուրքիոյ նախաձեռնած «հաղողութեան աղբիւր» գործողութենէն ետք, Քանատան նաեւ արգիլած էր զինուորական արտածումը դէպի Անգարա, սակայն անիկա անորոշ ժամանակով վերականգնուած էր ապրիլ 2020-ին:

4 յունիս 2020-ին զեկուցումի հրապարակումէն ետք յանձնախումբը նամակ յղած էր Քանատայի արտաքին գործոց



նախարարին: Ի պատասխան՝ Ֆրանսուա-Ֆիլիփ Շամպան բարձր գնահատած էր կառավարութեան որոշումը եւ յորդորած էր նախարարին շարունակել գերել մնալ թէ՛ Թուրքիոյ, թէ՛ ալ Ազրպէյճանի հետ զենքի առեւտուրէն: Քանատայի Հայ դատի յանձնախումբի համանախագահները նամակին մէջ յայտարարած են. «Թուրքիան ու Ազրպէյճանը լուրջ ռազմական սպառնալիք կը ներկայացնեն ո՛չ միայն իրենց մերձակից մէջ, այլ նաեւ առոր սահմաններէն դուրս:

«Մինչ Թուրքիան կը շարունակէ ապակայունացնել Միջին Արեւելքը եւ սպառնալ տեղւոյն փոքրամասնութիւններուն գոյութեան, Ազրպէյճան զգալիօրէն մեծոցած է իր ռազմական պատրաստութիւնը՝ անընդհատ ազդարարելով Արցախի Հանրապետութեան մէջ զինուորական գործողութիւններու վերսկսման մասին եւ միեւնոյն ատեն սպառնալով ուղղակի կերպով յարձակիլ Հայաստանի Հանրապետութեան վրայ», կը նշուի Քանատայի Հայ դատի յանձնախումբի նամակին մէջ:

ՖՐԱՆՍԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆ, ՈՐ ԵՐԿՐԻՆ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ»-Ի ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԱՌԱՇ ԵՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Բրիտանական «Սքայ Նիուզ» պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ ֆրանսական իշխանութիւնները յայտարարած են, որ երկրին տարածքին «Քորոնա» ժահրի համաճարակը առած են վերահսկողութեան տակ:

Ֆրանսայի առողջապահութեան նախարարութիւնը մէկ օր առաջ հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտարարած էր, որ երկրին մէջ ժահրով վարակուածներուն թիւը բարձրացած է 767-ով եւ հասած 15244-ի, իսկ մահացածներուն թիւը բարձրացած է 44-ով եւ հասած 29065-ի:

Նախարարութիւնը նշեց, որ դարմանումի համար հիւանդանոց փոխադրուած քաղաքացիներուն թիւը եօթը շաբաթներէ ի վեր կը շարունակէ նուազիլ:

Ֆրանսայի Գիտական խորհուրդի ատենապետ Ժան-Ֆրանսուա Տելֆրասի



«Ֆրանս Ինթեր» ծայրասփիւռի կայանին յայտնեց, որ համաճարակը երկրին մէջ «վերահսկողութեան տակ է», բայց կը շարունակէ տարածուիլ, սակայն դանդաղօրէն:

«Կեանքը պէտք է վերսկսի», ըսաւ ան, սակայն հասարակութեան կոչ ուղղեց՝ շատ հանգիստ ըլլալու:

«Մենք քիչ մը մեր զգօնութիւնը կը կորսնցնենք, սակայն ատիկա բնական է, մարդկային է: Պէտք չէ շատ հանգստանալ», զգուշացուց ան:

ՇՈՒԷՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՉ Կ'ՈՐԴՂԷ ՑՈՅՅԵՐԸ ԱՌՅԱՆՑ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՇՈՒԷՏԻ ԵՒ ԱՄՏՐԻՈՅ ՄԵՋ ՑՈՅՑ՝ ԸՆԴԴԵՍ ՅԵՂԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ



Շուէտի մէջ հազարաւորներ «Քորոնա» ժահրին պատճառով հաստատուած արգելքները անտեսելով բողոքի ցույց մը կատարեցին՝ զօրակցելով «Սեւամորթներու կեանքերը արժեք ունին» արշաւին, ինչ որ շուէտական կառավարութիւնը մղեց իր քաղաքացիներուն կոչ ուղղելու, որ իրենց բողոքի ցույցերը առցանց կատարեն:

Շուէտի ներքին գործոց նախարար Միքայիլ Տամպրօ յայտնեց, որ ցույց կատարելը ժողովրդավարական իրաւունք է՝ նշելով, որ պէտք է յարգել առողջապահական պետական մարմինին ցուցմունքները: «Ցեղապաշտութեան դէմ բողոքի ցույց կատարել բոլոր փափաքողներուն կոչ կ'ուղղեմ՝ դիմելու թուայնացած լրատուամիջոցներուն, այլապէս բազմաթիւ մարդիկ հիւանդանալու կամ մահանալու վտանգ պիտի դիմագրաւեն», ըսաւ ան:

Նշեց, որ Շուէտի մայրաքաղաք Սթոքհոլմի մէջ տեղի ունեցաւ քանի մը ժամ տեւողութեամբ ցույց մը, որուն մասնակիցները բարձրացուցած էին «Սեւամորթներուն կեանքերը արժեք ունին» գրութեամբ պաստառներ՝ զօրակցելով քանի մը օր առաջ Միացեալ Նահանգներու մէջ ոստիկանութեան կողմէ սպանուած ծագումով ափրիկեցի ճորճ Ֆլոյտին:


Աւստրիոյ մայրաքաղաք Վիեննայի մէջ մեծամասնութեամբ երիտասարդներ բաղկացած հազարաւորներ ցեղապաշտութեան դէմ միջազգային զօրաշարժի եւ ճորճ Ֆլոյտի սպանութեան դատապարտման ծիրին մէջ կատարեցին ցույց մը, որուն մասնակիցներէն շատեր ըսին, թէ ասիկա վերջին տարիներուն ընթացքին Աւստրիոյ մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած ցույցերուն մեծագոյնն է: Աւստրիական ոստիկանութիւնը ես Նշեց, որ մասնակցութիւնը մեծ էր, իսկ մասնակիցներուն թիւը շուրջ հինգ հազար էր:

Ցուցարարներ բարձրացուցած էին «Լոււ մալը համալիտ ըլլալ է», «Սպիտակամորթներուն լուրջինը սպիտակամորթներու թռնութիւն կը նշանակէ» եւ «Սեւամորթներուն կեանքերը արժեք ունին» գրութիւններով պաստառներ:

Նշեց, որ մէկ օր առաջ Աթենքի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան մօտ բախումներ տեղի ունեցած են յունական ոստիկանութեան եւ ցուցարարներու միջեւ՝ ծագումով ափրիկեցի ճորճ Ֆլոյտի սպանութեան պատճառով:

Բողոքի ցույցին մասնակցած էին ծախակողմեան կազմակերպութիւններէ քանի մը հազար մարդ եւ քիւրտեր:

«ՍՈՌՑԱՊՐԵ ԷՔ՝ ՀԱՅԵՐԸ ԱԶՐՊԵՅՃԱՆՑԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ ԶԵՆ ԿՐՆԱՐ ՀԱՄԱԶԱՅՆԻԼ» Կ'ԸՍԷ ԼՈՒՔԱՇԵՆՔՈ



Պիեռռուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքո Նոր Նշանակուած կառավարութեան հետ առաջին նիստի ընթացքին խօսած է ներկայ քաղաքական օրակարգի մասին: Այս մասին կը հաղորդէ «Սփութնիք Պելառուս»-ը:

«Մենք ստեղծած ենք մեր երկիրը, որուն մէջ մեր երեխաները կրնան ապրիլ: Այսօր այնպիսի պահ եկած է, որ պիտի պաշտպանենք զայն: Կը տեսնե՞ք՝ մեզ մասնուն կը բզբտեն: Ասիկա միակ յետխորհրդային երկիրն է, որ ցաւ չէ տեսած: Որոշ պիեռռուսներու կը թուի՝ տեղ մը հեռուն Ուքրանիան քանդեցին: Պատերազմ տեղի կ'ունենայ: Մոլտովան, որ երկու մասի կիսեցին, նոյնպէս հեռու կը թուի: Մոնցա՞ծ էք՝ ինչպէս Լիթուանիոյ մէջ կը կռուէին, կռիւով կը պահեն անկախութիւնը, գերիշխանութիւնը: Մոնցա՞ծ էք, որ այսօր Կովկասին ալ կ'ենայ. հայերը ազդեցականցիներուն հետ չեն կրնար համաձայնիլ: Մոնցա՞ծ էք, որ Վրաստանը կորսնցուցած է իր տարածքին գրեթէ մէկ երրորդը: Վերջապէս, ոչ ոք գիտէ, թէ իմ ընկերս՝ Ռահմոն ինչպէ՛ս գնդացիով մտած է Տաճիկիստանի մայրաքաղաք, որպէսզի այնտեղ կարգ ու կանոն հաստատէ», ըսած է Լուքաշենքո:

«ՔՈՐՈՆԱ»-Ի ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՇՏԱՊԻ ԹԷԺ ԳԻԾՆ Է (HOTLINE) 03-188911